Միջանկյալ արդյունք 1 Մաքուր բնակավայրեր, սանիտարահիգիենիկ բավարար պայմանների առկայություն	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) ✓ Աղբահանություն և սանիտարական մաքրում իրականացնող աշխատակիցների թիվը՝ 9 ✓ Աղբահանության ծառայության մատուցման հաճախականությունը (շաբաթվա կտրվածքով), 2 օր ✓ Ծրագրի իրականացման ժամկետը, 1 տարի ✓ Սանիտարական մաքրման ենթարկված տարածքների մակերեսը, 200 քմ ✓ Խնամված կանաչ տարածքների տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, 20 % ✓ Համայնքի բնակիչների բավարարվածությունը աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունից, 92 %	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,	2020թ. հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն

<p>Միջոցառումներ (գործողություններ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Գառնի բնակավայրում կանոնավոր աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպում 	<p>Սուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված ծախսեր՝ 18000.0 հազ. դրամ ✓ Աղբահանություն և սանիտարական մաքրում իրականացնող աշխատակիցների թիվը՝ 9 ✓ Աղբահանության համար գանձվող վճարի չափը, 150.0 ՀՀ դրամ ✓ Ձյան մաքրման մեքենաների թիվը 1 ✓ Աղբատար մեքենաների թիվը 1 ✓ Աղբամանների թիվը 1
<p>Ոլորտ 16. Զբոսաշրջություն</p>	
<p>2020 թվականին զբոսաշրջության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում</p>	
<p>Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն</p>	
<p>2020 թվականին տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում</p>	

3. Համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը

ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները				
			Համայնքի բյուջե	Պետական բյուջե	Դոնոր կազմակերպություններ	Համայնք-ՔՀՄՀ համագործակցություն	Այլ աղբյուրներ
Ոլորտ 1. Ընդհանուր							
3.	Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում	57730.8	57730.8				
4.	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	2530.0	2530.0				
Ընդամենը		60260.8	60260.8				
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում							
	Խրախուսում համայնքի գորակոչիկներին						
Ընդամենը							
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում							
	Քաղաքացիական պաշտպանության բնագավառում միջոցառումների կազմակերպում	1900.0	1900.0				
Ընդամենը		1900.0	1900.0				
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն							
3.	Գառնի համայնքում գիշերային լուսավորության իրականացում	5100.0	5100.0				
4.	Գառնի համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքների իրականացում	32051.5	32051.5				
Ընդամենը		37151.5	37151.5				
Ոլորտ 5. Հողօգտագործում							
	2020թվականին հողօգտագործման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում						
Ընդամենը							

Ոլորտ 6. Տրանսպորտ							
2.	Գառնի համայնքի ներքնակավայրային ճանապարհների վերանորոգման աշխատանքների իրականացում	11300.0	11300.0				
Ընդամենը		11300.0	11300.0				
Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ							
	2020 թվականին առևտրի և ծառայությունների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում						
Ընդամենը							
Ոլորտ 8. Կրթություն							
4.	Համայնքի Գառնի բնակավայրում նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցում	39493.6	39493.6				
5.	Գառնի բնակավայրում արտադպրոցական դաստիարակության ծառայությունների մատուցում	39724.9	39724.9				
6.	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների մատուցում	6300.0	6300.0				
Ընդամենը		85518.5	85518.5				
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ							
3.	Մշակութային, մարզական և հոգևոր կյանքի աշխուժացում	1655.9	1655.9				
4.	Գառնի բնակավայրում մշակույթի տան և գրադարանների գործնեության ապահովում	22999.0	22999.0				
5.	Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում	8000.0	8000.0				
Ընդամենը		32654.9	32654.9				
Ոլորտ 10. Առողջապահություն							
	2020 թվականին առողջապահության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում						
Ընդամենը							
Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ							
2.	2020 թվականին ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում						
Ընդամենը							
Ոլորտ 12. Մոցիալական պաշտպանություն							

2.	Աջակցություն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին	3000.0	3000.0				
Ընդամենը		3000.0	3000.0				
Ոլորտ 13. Գյուղատնտեսություն							
2.	Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերման և պահպանման աշխատանքների իրականացում	270.0	270.0				
Ընդամենը		270.0	270.0				
Ոլորտ 14. Անասնաբուծություն և բուսասանիտարիա							
	2020 թվականին անասնաբուծության և բուսասանիտարիայի ոլորտում	870.0	870.0				
Ընդամենը		870.0	870.0				
Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն							
2.	Գառնի համայնքի բնակավայրերում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացում	18000.0	18000.0				
Ընդամենը		18000.0	18000.0				
Ոլորտ 16. Զբոսաշրջություն							
	2020 թվականին զբոսաշրջության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-	-				
Ընդամենը		-	-	-			
Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն							
	2020 թվականին տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-	-				
Ընդամենը		-	-				
Ընդհանուրը							

	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	25000.0
Ընդհանուրը		275925.7

1. Համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը

Աղյուսակ 8. Համայնքի 2020թ. ՏԱՊ-ում ներառված ծրագրի արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը

Ոլորտ 1. Ընդհանուր					
Ծրագիր 1. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների մատուցում					
Արդյունքային ցուցանիշները		2020 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Համայնքի աշխատակազմի աշխատողներ	19			
Ելքային (քանակական)	ՏԻՄ-երի, աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից ստացվող դիմում-բողոքների թվի նվազում (%-ով)	5			
Ելքային (որակական)	Անշարժ գույքի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում, %	4			
Ելքային (ժամկետայնության)	Աշխատակազմում ստացված մեկ դիմումին պատասխանելու միջին ժամանակը, օր	4			
Վերջնական արդյունքի	Բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը, շատ վատ, վատ, բավարար, լավ, գերազանց	լավ			
Ծախսեր, հազ. դրամ	275925.7	275925.7			

Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն					
Ծրագիր 1. Գառնի բնակավայրի բազմաբնակարան շենքերի տանիքների և շքամուտքերի վերանորոգման և զբոսայգու բարեկարգման աշխատանքների իրականացում					
Արդյունքային ցուցանիշները		2020 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Շինարարական աշխատանքներն իրականացնող աշխատակիցների թիվը	5			

Ելքային (քանակական)	Բազմաբնակարան շենքերի թիվը, որոնց տանիքները վերանորոգվել են	6			
	Բազմաբնակարան շենքերի թիվը, որոնց շքամուտքերը վերանորոգվել են	5			
Ելքային (որակական)	Զբոսայգու վիճակը	բավարար			
Ելքային (ժամկետայնության)	Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման տևողությունը, օր	40			
Վերջնական արդյունքի	Նորոգված տանիքներ ունեցող բազմաբնակարան շենքերի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, %	15			
	Նորոգված շքամուտքեր ունեցող բազմաբնակարան շենքերի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, %	15			
	Համայնքի բնակիչների կարծիքը զբոսայգու բարեկարգման աշխատանքների վերաբերյալ, շատ վատ, վատ, բավարար, լավ, գերազանց	բավարար			
Ծախսեր, հազ. դրամ	0	0			

Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն					
Օրագիր 2. Գառնի համայնքում գիշերային լուսավորության իրականացում					
Արդյունքային ցուցանիշները		2020 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Համայնքապետարանից փողոցների գիշերային լուսավորության անցկացման աշխատանքները կազմակերպող և վերահսկող աշխատակիցների թիվը	2			

Ելքային (քանակական)	Փողոցների արտաքին լուսավորության համակարգի երկարությունը, կմ	7			
Ելքային (որակական)	Երթևեկության անվտանգության մակարդակի բարձրացում՝ այո, ոչ	այո			
Ելքային (ժամկետայնության)	Գիշերային լուսավորության ժամերի թիվը օրվա կտրվածքով՝ ձմռանը, ժամ	3			
	Գիշերային լուսավորության ժամերի թիվը օրվա կտրվածքով՝ ամռանը, ժամ	4			
Վերջնական արդյունքի	Համայնքում էներգախնայող լամպերով լուսավորվող տարածքների մակերեսի տեսակարար կշիռը լուսավորվող տարածքների ընդհանուր մակերեսի մեջ, %	10			
Օախսեր, հազ. դրամ	5100.0	5100.0			

Ոլորտ 6. Տրանսպորտ					
Օրագիր 1. Գառնի համայնքի ներհամայնքային ճանապարհների վերանորոգման աշխատանքների իրականացում					
Արդյունքային ցուցանիշները		2020 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Տեղափոխվող հողի և խճի ծավալը, տոննա	4			
Ելքային (քանակական)	Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգված եզրաքարերի երկարությունը, մ	55			
Ելքային (որակական)	Բարեկարգ միջբնակավայրային ճանապարհների մակերեսի տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, %	30			
Ելքային (ժամկետայնության)	Համայնքի կենտրոնից բնակավայրեր հասնելու	15			

	Ժամանակի կրճատում, րոպե				
Վերջնական արդյունքի	Ներհամայնքային ճանապարհների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների մատուցման որակը՝ շատ վատ, վատ, բավարար, լավ, գերազանց	լավ			
Ծախսեր, հազ. դրամ	11300.0	11300.0			

Ոլորտ 8. Կրթություն					
Օրագիր 1. Համայնքում նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցում					
Արդյունքային ցուցանիշները		2020 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Մանկապարտեզի գույքի միավորների թիվը՝	170			
Ելքային (քանակական)	ՆՈՒՀ-եր հաճախող երեխաների ընդհանուր թիվը	140			
Ելքային (որակական)	Ծնողների կարծիքը մատուցվող նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ՝ շատ վատ, վատ, բավարար, լավ, գերազանց	լավ			
Ելքային (ժամկետայնության)	Նախադպրոցական կրթության ծառայության մատուցման օրերի թիվը շաբաթվա ընթացքում, օր	5			

Վերջնական արդյունքի	Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին, %	40			
Ծախսեր, հազ. դրամ	39493.6	39493.6			

Ոլորտ 8. Կրթություն					
Ծրագիր 1. Գառնի համայնքում Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների մատուցում					
Ծրագիր 2. Գառնի համայնքում արտադպրոցական դաստիարակության ծառայության մատուցում					
Արդյունքային ցուցանիշները		2020 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	գույքի միավորների թիվը	120			
Ելքային (քանակական)	հաճախող երեխաների ընդհանուր թիվը`	26			
Ելքային (որակական)	Մատուցվող արտադպրոցական դաստիարակության ծառայության հասանելիությունը համայնքի բնակիչներին, %	40			
Ելքային (ժամկետայնության)	Արտադպրոցական դաստիարակության ծառայության մատուցման օրերի թիվը տարվա ընթացքում, օր	120			
Վերջնական արդյունքի	Մատուցվող արտադպրոցական դաստիարակության ծառայության հասանելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին, %	10			
Ծախսեր, հազ. դրամ	52324.9	52324.9			

Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ					
Ծրագիր 1. Մշակութային, մարզական և հոգևոր կյանքի աշխուժացում					
Արդյունքային ցուցանիշները		2020 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ.	Փաստ.	Շեղումը	Մեկնաբանություն

		արժեքը	արժեքը		
Մուտքային	Մարզադաշտերի թիվը	1			
Ելքային (քանակական)	Տարվա ընթացքում կազմակերպված մարզական մրցաշարերի թիվը	2			
	Տարվա ընթացքում կազմակերպված մշակութային միջոցառումների թիվը	9			
Ելքային (որակական)	Համայնքի ապահովվածությունը մարզադաշտերով և խաղահրապարակներով ,%	40			
Ելքային (ժամկետայնության)	Համայնքում կազմակերպված մշակութային օրերի թիվը	9			
Վերջնական արդյունքի	Մատուցվող մշակութային ծառայությունների մատչելիությունը համայնքի բնակիչներին, %	70			
	Մշակութային խմբակներում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը համապատասխան տարիքի երեխաների թվի կազմում, %	40			
Ծախսեր, հազ. դրամ	32654.9	32654.9			

Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն					
Ծրագիր 1. Աջակցություն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին					
Արդյունքային ցուցանիշները		2020 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Սոցիալական ծրագրի առկայությունը,	այո			
Ելքային (քանակական)	Սոցիալական աջակցություն ստացած սոցիալապես խոցելի ընտանիքների թիվը	35			
Ելքային (որակական)	Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող ծրագրից, %	34			
Ելքային (ժամկետայնության)	Ծրագրի իրականացման ժամկետը, տարի	1			
Վերջնական արդյունքի	Սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականության մակարդակի բարձրացում՝ այո, ոչ	այո			
Ծախսեր, հազ. դրամ	3000.0	3000.0			

Ոլորտ 13. Գյուղատնտեսություն					
Ծրագիր 1. Գյուղատնտեսության զարգացման համար նախադրյալերի ստեղծում					
Արդյունքային ցուցանիշները		2020 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Հակակարկտային կայանի ստեղծման համար անհրաժեշտ տարածքների առկայություն,	այո			
Ելքային (քանակական)	Գյուղատնտեսությամբ զբաղվածների թվի տեսակարար կշիռը համայնքի բնակչության ընդհանուր թվի մեջ, %	45			

Ելքային (որակական)	Գյուղատնտեսության բնագավառում զբաղվածության աճը նախորդ տարվա համեմատ, %	2			
Ելքային (ժամկետայնության)	Ծրագրի իրականացման ժամկետը, տարի	1			
Վերջնական արդյունքի	Հացահատիկային մշակաբույսերի բերքատվության մակարդակի բարձրացում, %	3			
Ծախսեր, հազ. դրամ	1140.0	1140.0			


Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն					
Ծրագիր 1. Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացում					
Արդյունքային ցուցանիշները		2020 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Աղբահանություն և սանիտարական մաքրում իրականացնող աշխատակիցների թիվը`	5			
Ելքային (քանակական)	Խնամված կանաչ տարածքների տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, %	20			
Ելքային (որակական)	Համայնքի բնակիչների բավարարվածությունը աղբահանություն և սանիտարական մաքրման ծառայությունից, %	80			
Ելքային (ժամկետայնության)	Աղբահանության ծառայության մատուցման հաճախականությունը (շաբաթվա կտրվածքով), օր	2			
Վերջնական արդյունքի	Մաքուր բնակավայրեր, սանիտարահիգիենիկ բավարար պայմանների առկայություն` այո,ոչ	այո			
Ծախսեր, հազ. դրամ	18000.0	18000.0			

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու

2019 թվականի նոյեմբերի 26 թիվ 57-Ա



Կ Ա Ր Գ

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Գառնի համայնքի ղեկավարին (այսուհետև՝ համայնքի ղեկավար) վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման հետ կապված հարաբերությունները:

2. Ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի համայնքի ղեկավարը իրականացնում է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով թվարկված և այլ օրենքներով վերապահված կամավոր լիազորություններ: «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով համայնքի ղեկավարը իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունները՝

Համայնքի ղեկավարի լիազորությունները քաղաքացիների և

տնտեսավարող սուբյեկտների իրավունքների բնագավառում

1) կատարում է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առնում քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ձեռնարկում է համապատասխան միջոցներ:

2) իր լիազորությունների շրջանակում կայացնում է որոշումներ, որոնցով խթանում է համայնքում տնտեսական գործունեություն նախաձեռնողների ծրագրերի և նրանց գործունեության առավել արդյունավետ իրականացումը:

3) կանոնակարգում է հավաքների անցկացումը՝ Հայաստանի Հանրապետության

Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով:

4) կազմակերպում է համայնքի արխիվային գործի վարումը:

5) իրականացնում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված՝ սույն բնագավառին վերաբերող լիազորությունները:

Համայնքի ղեկավարի լիազորությունները տեղական

ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառում

1) համայնքի բնակիչների համար ստեղծում է բավարար պայմաններ՝ իրազեկ լինելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը՝ այդ նպատակով օգտագործելով համայնքում հասանելի որևէ ձև կամ միջոց (այդ թվում՝ տեղեկատվության և հեռահաղորդակցության)։

2) ապահովում է համայնքի բնակիչների իրազեկման և մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար վայրերում, ինչպես նաև ստեղծում է համապատասխան անհրաժեշտ պայմաններ այդ միջոցառումներին մասնակցելու ցանկություն հայտնաձև համայնքի հաշմանդամների և սակավաշարժուն խմբերի համար։

3) կազմակերպում է տեղական ինքնակառավարմանն առնչվող օրենսդրական և ենթօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների հանրային լսումներ կամ քննարկումներ, դրանց վերաբերյալ առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնությունների և նախագծերի հեղինակներին։

4) համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում կամ ներգրավում է համայնքի տարածքում կազմակերպվող ուսուցման և վերապատրաստման ծրագրերում։

Համայնքի ղեկավարի լիազորությունները ֆինանսների բնագավառում

1) կազմում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի բյուջեի նախագիծը, դրանում առաջարկվող փոփոխություններն ու ապահովում է բյուջեի կատարումը, որի վերաբերյալ եռամսյա հաղորդումներ և տարեկան հաշվետվություն է ներկայացնում համայնքի ավագանուն։

2) տեղական հարկերի, տուրքերի և վճարների՝ օրենքով սահմանված տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացնում է ավագանու հաստատմանը։

3) օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը։

4) տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ։

5) համայնքի կողմից իրականացվող ծառայությունների դիմաց կատարվող վճարների դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագիծը ներկայացնում է ավագանու հաստատմանը։

6) համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում փոխատվությունների ձևով միջոցների ներգրավման, այդ թվում՝ համայնքային պարտատոմսերի թողարկման փաստաթղթերը, ինչպես նաև համաձայնեցնելով պետական լիազորված մարմնի հետ՝ համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում վարկերի ձևով միջոցների ներգրավման հարցը։

7) տնօրինում է համայնքի բյուջեի միջոցները։

8) օրենքով սահմանված կարգով ապահովում է համայնքի բյուջետային գործընթացի կառավարումը:

Համայնքի ղեկավարի լիազորությունները պաշտպանության կազմակերպման բնագավառում

1) օրենքով սահմանված կարգով վարում է համայնքի զինապարտների գրանցամատյան, նրանց վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև համայնքի բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները ներկայացնում է տարածքային զինվորական կոմիսարիատ:

2) օրենքով սահմանված դեպքերում և կարգով մասնակցում է զորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպմանը, ինչպես նաև տարածքային պաշտպանության և ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովման միջոցառումներին:

3) իրենց պարտականությունները խախտած զինապարտ քաղաքացիների վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում այդ մասին անհապաղ գրավոր տեղեկատվություն է տրամադրում տարածքային զինվորական կոմիսարիատին:

1) աջակցում է գոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների, հաշմանդամ զինծառայողների սոցիալական խնդիրների լուծմանը:

2) աջակցում է բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության միջոցառումների իրականացմանը:

Համայնքի ղեկավարի լիազորությունները արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բնագավառում

1) իրականացնում է միջոցառումներ համայնքային ենթակայության օբյեկտների անվտանգ աշխատանքն ապահովելու նպատակով:

2) իրականացնում է համայնքի բնակչության ազդարարումը:

Համայնքի ղեկավարի լիազորությունները քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմում է համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը՝ համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը և քաղաքաշինական գոտիավորման նախագիծը կամ դրանց փոփոխություններն ու նախագծման առաջադրանքները:

Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի կամ դրանց փոփոխությունների, ինչպես նաև նախագծման առաջադրանքների նախագծերը, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը:

2) կազմում և վարում է համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզը (այսուհետ՝ ընթացիկ քարտեզ):

3) նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով վարում է համայնքի քաղաքաշինական կադաստրը, կազմում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը և ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը:

4) համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատողներին տալիս է ճարտարապետահատակագծային առաջադրանք (կամ նախագծման թույլտվություն), որում ներառվում են իր կողմից

ինժեներական սպասարկում իրականացնող ծառայություններին ներկայացված հարցման հիման վրա ստացված՝ օբյեկտի նախագծման տեխնիկական պայմանները: Մեկից ավելի համայնքների տարածքներ ընդգրկող՝ հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների կառուցման նպատակով և հատուկ նշանակության հողերում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը (կառուցապատման ընթացակարգերը) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

5) օրենքով սահմանված դեպքերում և կարգով համայնքի բնակչությանն իրազեկում է միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին.

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համաձայնեցնում է ճարտարապետաշինարարական նախագծերը, տալիս է շինարարության (քանդման) թույլտվություն, միջոցառումներ է ձեռնարկում շինարարության թույլտվությամբ նախատեսված ժամկետներում կառուցապատումն ավարտելու համար.

7) օրենքով սահմանված կարգով ձևակերպում է շինարարության ավարտական ակտ, ինչպես նաև տրամադրում է ավարտված շինարարական օբյեկտի շահագործման թույլտվություն.

8) կանխարգելում ու կասեցնում է ինքնական շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը.

9) օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում շենքերի ու շինությունների նպատակային օգտագործման և պահպանման, կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքով, համայնքի քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ.

10) իրականացնում է համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների հաշվառումը և բաշխումը, կազմում է սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը, դրանք ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը.

11) մշակում և կազմում է համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերը, որոնք կազմում են համայնքի հնգամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մասը, և դրանք ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը.

12) համայնքի քաղաքաշինական կանոնադրությանը համապատասխան՝ տալիս է արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն.

13) կազմակերպում է համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքը, ապահովում է համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների, վարչական շենքերի և այլ շինությունների պահպանումը, շահագործումը, կազմակերպում է դրանց նորոգումը.

14) կազմակերպում և կառավարում է համայնքի սեփականություն հանդիսացող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղի, կոյուղու, ոռոգման ու ջեռուցման ցանցերի և այլ կառուցվածքների շահագործումը.

15) կազմակերպում է համայնքի բնակավայրերի բարեկարգումը և կանաչապատումը.

16) կազմակերպում է աղբահանությունը և սանիտարական մաքրումը, ինչպես նաև իրականացնում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքով նախատեսված այլ լիազորություններ.

17) կազմակերպում է համայնքային գերեզմանատների գործունեությունը և դրանց պահպանման աշխատանքները, իրականացնում է «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ.

18) օրենքով սահմանված կարգով աջակցում է բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների ձևավորմանը: Ապահովում է համայնքի մասնակցությունն այդ շենքերի սպասարկմանը՝ իր սեփականությունը հանդիսացող բնակարանների քանակին համապատասխան.

19) կառուցման ավարտի գրանցում չունեցող այն բազմաբնակարան շենքերի, որոնց ստորաբաժանված միավորները առանձին վկայականներով գրանցված են որպես 100 տոկոսից ցածր ավարտվածություն ունեցող անավարտ շինություններ, կառուցման ավարտի գրանցման նպատակներով աջակցում է կառուցապատողի գործառույթների իրականացման համար սեփականատերերի կողմից համապատասխան կազմակերպության ընտրության գործընթացին կամ կառուցապատողի գործառույթների իրականացումը վերապահում է համայնքում գործող բազմաբնակարան շենքի կառավարմանը որևէ մարմնի, որն իրականացնում է կառուցապատողի գործառույթներ առանձնացված միավորների սեփականատերերի միջոցներով.

20) կազմակերպում է այն բազմաբնակարան շենքերի պահպանումը, որոնք չեն կառավարվում օրենքով սահմանված՝ բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կողմից.

21) համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի պահպանումն իրականացնելու նպատակով, օրենքով սահմանված կարգով, համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում պարտադիր նորմերի շրջանակներում իրականացվող աշխատանքների համար անհրաժեշտ վճարների չափերը.

22) կազմակերպում է հանգստի հանրային վայրերի խնամքը և պահպանությունը:

Համայնքի ղեկավարի լիազորությունները հողօգտագործման բնագավառում

1) օրենքով սահմանված դեպքերում և կարգով կազմում է համայնքների հողերի օգտագործման սխեմաներն ու քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը և ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը.

2) մշակում և կազմում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերը, որոնք կազմում են համայնքի հնգամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մասը, և դրանք ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը.

3) համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան, համայնքի ավագանու համաձայնությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը.

4) օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ.

5) օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները.

6) իրականացնում է համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի բարելավման աշխատանքներ:

2. Համայնքի ղեկավարը սույն բնագավառում իրականացնում է պետության պատվիրակած

հետևյալ լիազորությունները.

1) օրենքով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնում է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը և կազմում է

համայնքի հողային հաշվեկշիռը.

2) համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան՝ օրենքով սահմանված դեպքերում ու կարգով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերը.

3) օրենքով սահմանված կարգով ապահովում է համայնքի տարածքում գտնվող գեոդեզիական կետերի և համայնքի սահմանանիշերի պահպանությունը:

Համայնքի ղեկավարի լիազորությունները տրանսպորտի բնագավառում

1) կազմակերպում է համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանումը և շահագործումը.

2) իր իրավասության սահմաններում կազմակերպում է ճանապարհային անվտանգ երթևեկությունը համայնքային ենթակայության ճանապարհների վրա.

3) կազմակերպում և կառավարում է համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքն ու համայնքային ենթակայության տրանսպորտային կազմակերպությունների գործունեությունը.

4) տալիս է համայնքի տարածքում մարդաստար տաքսիների (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվություն:

Համայնքի ղեկավարի լիազորություններն առևտրի և ծառայությունների բնագավառում

1) օրենքով սահմանված կարգով հսկողություն է իրականացնում առևտրի և հանրային սննդի շուկայում.

2) տալիս է ոգելից խմիչքների կամ ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվություն.

3) տալիս է համայնքի տարածքում բացօթյա վաճառք, տոնավաճառներ կազմակերպելու թույլտվություն.

4) տալիս է համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն.

5) համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին

տալիս է ժամը 23.00-ից հետո աշխատելու թույլտվություն.

6) Հայաստանի Հանրապետության կառավարություն առաջարկություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման տարեկան ծրագրում համայնքի մասնակցության մասին.

7) համայնքի տարածքում տալիս է թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառքի թույլտվություն.

8) տալիս է համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն.

9) տալիս է համայնքի տարածքում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն:

Համայնքի ղեկավարի լիազորությունները կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում

1) կազմակերպում է նախադպրոցական և արտադպրոցական կրթության իրականացումը համայնքի տարածքում.

2) կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության դպրոցների, մանկապարտեզների, ակումբների, մշակույթի տների, երիտասարդական կենտրոնների, գրադարանների, կրթական, մշակութային և երիտասարդական այլ հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը, դրանց շահագործման և նորոգման աշխատանքները.

3) իրականացնում է դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություն.

4) ստեղծում է պայմաններ երիտասարդական ծրագրերի և միջոցառումների կազմակերպման, անցկացման համար.

5) աջակցում է համայնքում երիտասարդական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի, միջոցառումների իրականացմանը:

Համայնքի ղեկավարի լիազորությունները առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում

1) կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների և մարզական կազմակերպությունների գործունեությունը.

2) կազմակերպում է ներհամայնքային և միջհամայնքային պարբերական զանգվածային մարզական միջոցառումներ և մրցույթներ.

3) ըստ բնակության վայրի, ինչպես նաև հասարակական վայրերում ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար ստեղծում է համապատասխան պայմաններ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով.

4) նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, իրականացնում է մարզական հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարություն, վերանորոգում, ստեղծում է հանգստի գոտիներ:

Համայնքի ղեկավարի լիազորությունները սոցիալական պաշտպանության բնագավառում

1) միջոցներ է ձեռնարկում հայտնաբերելու սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքներին.

2) միջոցներ է ձեռնարկում սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքներին՝ օգնելու հայտնաբերել և օգտագործել դժվարություններ հաղթահարելու իրենց կարողությունները.

3) նպաստում է համայնքում բնակվող սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքների սոցիալական կարիքների բավարարմանը՝ կազմակերպելով տնային այցելություններ և հնարավորության դեպքում մատուցելով «Սոցիալական

աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սոցիալական ծառայություններ կամ ուղղորդելով սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններ կամ մասնագիտացված այլ կազմակերպություններ.

4) որպես «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված աջակցող ցանցի ներկայացուցիչ՝ համագործակցում է վերջինիս մասնակիցների հետ.

5) ապահովում է «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղական սոցիալական ծրագրերի կազմումը և իրականացումը՝ որպես առանձին ծրագիր կամ որպես համայնքի հնգամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մաս:

Համայնքի ղեկավարի լիազորությունները գյուղատնտեսության բնագավառում

1) կատարում է համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման ցանցերի շահագործումը, դրանց շինարարությունը և վերանորոգումը.

2) համաքաղաքային կանոններին համապատասխան՝ տալիս է քաղաքի տարածքում տնային կենդանիներ պահելու թույլտվություն և կատարում է դրանց ամենամյա հաշվառում.

3) իրականացնում է համայնքի գյուղատնտեսական ռեսուրսների հաշվառում, որի կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

4) իրականացնում է գյուղատնտեսական զարգացման ծրագրեր, աջակցում է գյուղատնտեսության ոլորտում պետական միջոցներով և այլ միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի կազմակերպմանն ու իրականացմանը:

Համայնքի ղեկավարի լիազորությունները անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում

1) լիազոր մարմնին տրամադրում է կատարված անասնահակահամաճարակային միջոցառումների, հայտնաբերված վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների վերաբերյալ տեղեկատվություն:

Համայնքի ղեկավարի լիազորությունները շրջակա միջավայրի պահպանության բնագավառում

1) կազմակերպում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի և դրանց վրա գտնվող համայնքային նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների և համայնքային անտառների պահպանությունը:

Համայնքի ղեկավարի լիազորությունները զբոսաշրջության բնագավառում

1) գույքագրում և վարում է համայնքի զբոսաշրջային ռեսուրսների (բնական, պատմամշակութային, մարդկային) գրանցամատյանը.

2) ըստ անհրաժեշտության՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնին տեղեկատվություն է տրամադրում համայնքի զբոսաշրջային ռեսուրսների վերաբերյալ.

3) զբոսաշրջության վարչական ռեգիստրի վարման նպատակով համապատասխան տեղեկատվություն է տրամադրում ռեգիստրը վարող պետական լիազոր մարմնին.

4) համայնքում սահմանում և տրամադրում է հատուկ կայանման և կանգառի վայրեր՝ զբոսաշրջիկների տրանսպորտային փոխադրամիջոցների համար.

- 5) զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության իրականացման և զբոսաշրջության կայուն զարգացման նպատակով համագործակցում է պետական կառավարման մարմինների, մասնավոր հատվածի և բնակչության հետ:
- 6) իր լիազորությունների շրջանակում ընդունված որոշումներով խթանում է զբոսաշրջային կառույցների և ենթակառուցվածքների ստեղծմանը, ինչպես նաև զբոսաշրջության զարգացմանը միտված միջոցառումների կազմակերպմանը և անցկացմանը:

Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում՝

1) նպաստում է նոր աշխատատեղերի ստեղծմանը, կազմակերպում է վճարովի հասարակական աշխատանքներ:

2) միջոցներ է ձեռնարկում հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, պատերազմի վետերանների, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, բազմազավակ ընտանիքների, բռնադատվածների, ՀՀ պաշտպանության ժամանակ, ինչպես նաև զինվորական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների ընտանիքի անդամների, ինչպես նաև զինծառայությունից արձակվածների, Չեռնոբիլի վթարի վերացման մասնակիցների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ:

3. Յուրաքանչյուր տարի կամավոր լիազորությունների իրականացման համար համայնքի ղեկավարին կարող է նախատեսվել հատկացնել ֆինանսական միջոցներ, որը չի կարող գերազանցել այդ տարվա համայնքի բյուջեով նախատեսված սեփական եկամուտների 10%-ը:

4. Այն դեպքում, երբ համայնքի ղեկավարի կողմից կամավոր լիազորությունների իրականացման համար պահանջվում է ֆինանսական միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման չափերի մասին ավագանու որոշումների դեպքերում:

5. Այն դեպքում, երբ համայնքի ղեկավարի կողմից կամավոր լիազորությունների իրականացման համար չի պահանջվում ֆինանսական միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

6. Կամավոր լիազորությունների իրականացման առաջարկություն կարող են նախաձեռնել համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու անդամները, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ:

7. Այն դեպքում, երբ կամավոր լիազորության իրականացումը նախաձեռնում է համայնքի ղեկավարը կամ համայնքի ավագանու անդամը, նախաձեռնողը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում կամավոր լիազորության իրականացման վերաբերյալ առաջարկությունը՝ նշելով օրենսդրությամբ նախատեսված լիազորության տեսակը, դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

8. Այն դեպքում, երբ կամավոր լիազորության իրականացումը նախաձեռնում են բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտները, նախաձեռնողը համայնքի ղեկավարին է ներկայացնում կամավոր լիազորության իրականացման վերաբերյալ դիմում՝ նշելով օրենսդրությամբ նախատեսված լիազորության տեսակը, դրա համար

անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը, անհրաժեշտության հիմնավորումը և դրա պատճառը, անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

9. Համայնքի ղեկավարը դիմումը և սույն կարգի 8-րդ կետում նշված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝

1) կամավոր լիազորության իրականացմանը համաձայնվելու դեպքում՝ մեկամսյա ժամկետում ճշտում է դրանց արժանահավատությունը, հաշվարկում կամավոր լիազորության իրականացման համար գումարի մեծությունը և իր կարծիքը, ինչպես նաև կամավոր լիազորության իրականացման վերաբերյալ նախաձեռնողի ներկայացրած փաստաթղթերը և ավագանու որոշման նախագիծը ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և այդ մասին տեղեկացնում է նախաձեռնողին.

2) կամավոր լիազորության իրականացմանը չհամաձայնելու դեպքում նախաձեռնողին՝ գրավոր տեղեկացնում է այդ մասին՝ նշելով չհամաձայնելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

10. Եթե կամավոր լիազորության իրականացման նախաձեռնողը սույն կարգի 8-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում համայնքի ղեկավարից չի ստանում կամավոր լիազորության իրականացմանը չհամաձայնելու մասին գրավոր պատասխան կամ իր փաստաթղթերը համայնքի ավագանուն ուղարկելու վերաբերյալ գրություն կամ եթե նախաձեռնողը համաձայն չէ կամավոր լիազորության իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու մասին հիմնավորումներին, ապա 20-օրյա ժամկետում համայնքի ղեկավարին ներկայացված դիմումի կրկնօրինակը՝ սույն կարգի 8-րդ կետում նշված փաստաթղթերի հետ միասին, իսկ կամավոր լիազորության իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու վերաբերյալ գրավոր պատասխանի առկայության դեպքում՝ այդ պատասխանի վերաբերյալ իր առարկությունները և ավագանուն ուղղված դիմումը ներկայացնում է վերջինիս քննարկմանը:

11. Համայնքի ավագանին սույն կարգի 8-րդ կամ 10-րդ կետերում նշված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց, ինչպես նաև իր նախաձեռնությամբ կամավոր լիազորության իրականացման դեպքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հարցը քննարկելուց հետո ընդունում է որոշում կամավոր լիազորության իրականացման համաձայնություն տալու կամ մերժելու վերաբերյալ:

12. Համայնքի ավագանու որոշման մեջ նշվում են՝ կամավոր լիազորության իրականացման լիազորության տեսակը, դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը, իսկ կամավոր լիազորության իրականացումը մերժելու դեպքում մերժելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

13. Համայնքի ղեկավարը զինձառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինձառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով՝ իր որոշմամբ հասարակական հիմունքներով կազմում է մշտական գործող հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են՝ համայնքի ավագանու անդամները, հասարակական կազմակերպությունների և միավորումների ներկայացուցիչները, աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների

մասնագետները, ինչպես նաև համայնքի բնակիչները և այլ շահագրգիռ անձինք, եթե նրանք այդ մասին նախապես տվել են իրենց համաձայնությունը:

14. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համայնքի ղեկավարին վերապահված այլ կամավոր լիազորությունների իրականացման համար համայնքի ղեկավարը կարող է կազմել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ:

15. Զինձառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինձառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները ավագանու կողմից քննարկվում են միայն մշտական գործող հանձնաժողովի կողմից կամավոր լիազորության իրականացման եզրակացության և անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտության հիմնավորման առկայության դեպքում:

16. Սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվող մեկանգամյա սոցիալական օգնության նվազագույն չափը սահմանվում է տասը հազար դրամ, առավելագույն չափը սահմանվում է հարյուր հազար դրամ: Նույն ընտանիքին տարվա ընթացքում սոցիալական օգնության կարող է հատկացվել առավելագույնը **2 անգամ**, որի չափը չի կարող գերազանցել սոցիալական օգնության առավելագույն չափի **1,5-պատիկի չափը**: Արգելվում է սոցիալական օգնության հատկացումը համայնքի բնակիչ չհանդիսացող, ինչպես նաև համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունները չկատարած անձանց, համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների ընտանիքի անդամներին և համայնքի ղեկավարի մերձավոր բարեկամներին (ծնող, քույր, եղբայր, երեխա):

17. Սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողներին ուսման վարձի հատկացումը կարող է իրականացվել միայն պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու դեպքում և առավելագույնը կարող է հատկացվել տարեկան **2 անգամ՝ տարեկան ուսման վարձի 50%-ի չափով**: Արգելվում է ուսման վարձի հատկացումը համայնքի բնակիչ չհանդիսացող, ինչպես նաև համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունները չկատարած անձանց, համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների ընտանիքի անդամներին, մերձավոր բարեկամներին (ծնող, քույր, եղբայր, երեխա), եթե վերջիններս վարում են համատեղ տնտեսություն:

18. Համայնքի ավագանու կողմից սույն կարգով չնախատեսված կարգով կամավոր լիազորությունների իրականացումն արգելվում է: